

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 19.02.20թ. կայացած թիվ 8.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Մագիստրական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների քննարկում և հաստատում:
2. Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Ֆիզիկական էկոլոգիա միջազգային լաբորատորիայի կողմից Միջազգային գիտատեխնիկական կենտրոն ներկայացվող ”Հանքանյութերից և պոչանքներից հազվագյուտ և թանկարժեք մետաղների կորզման արդյունավետ ֆիզիկաքիմիական և կենսաբանական տեխնոլոգիա” վերնագրով նախագծի (նախագծի մենեջեր ք.գ.դ. Լ.Հարությունյան, գիտական ղեկավար ֆ.մ.գ.թ. Ն. Բադալյան) երաշխավորում:
3. Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Ֆիզիկական էկոլոգիա միջազգային լաբորատորիայի կողմից Միջազգային գիտատեխնիկական կենտրոն ներկայացվող ” Բնակչության վրա ոչ իոնացնող էլեկտրամագնիսական ճառագայթման անվտանգ ազդեցության մակարդակի գնահատման մեթոդների մշակում” վերնագրով նախագծի (նախագծի մենեջեր ֆ.մ.գ.թ. Ս. Յայլոյան, գիտական ղեկավար ֆ.մ.գ.թ. Ն. Բադալյան) երաշխավորում:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց մագիստրական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների ամփոփիչ հաշվետվություն: Ռ. Հակոբյանը ներկայացրեց նաև Միջազգային գիտատեխնիկական կենտրոն ներկայացվող նախագծերը:

Քննարկումից հետո միաձայն որոշվեց՝

1. Հաստատել մագիստրական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները:
2. Երաշխավորել Հ.Բադայանի նախագծերը Միջազգային գիտատեխնիկական կենտրոն ներկայացնելու համար:

Տիգրիկայի ֆակուլտետի ղեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Հ.Հ. Հովհաննիսյան